ԴՈՒ ԿԱՐՈՂ Է ԶԱՐՄԱՆԱՍ

Ինչի՞ համար եկավ Հիսուսը (Մաս 2)

Ի՞նչ արեց Հիսուսը

«Հիսուսը Զիթենյաց լեռը գնաց: Առավոտյան դարձյալ տաճար եկավ, և ամբողջ ժողովուրդը նրա մոտ էր գալիս: Նա նստած ուսուցանում էր նրանց: Դպիրներն ու փարիսեցիները նրա մոտ շնության մեջ բռնված մի կնոջ բերեցին և նրան մեջտեղ կանգնեցնելով՝ ասացին Հիսուսին. «Վարդապե՛տ, այս կինը բռնվել է հայտնապես շնանալիս: Մովսեսը Օրենքում մեզ պատվիրել է քարկոծել այսպիսիներին: Հիմա դու ի՞նչ ես ասում»: Բայց նրան փորձելու համար էին այդ ասում, որպեսզի նրան ամբաստանելու պատճառ ունենան: Հիսուսը, գետնին նայելով, մատով գրում էր հողի վրա: Բայց երբ պնդում էին իրենց հարցումը, նա վեր նայեց ու ասաց. «Ձեզանից ով անմեղ է, թող առաջինը նա՛ քար գցի դրա վրա»: Եվ դարձյալ ցած նայելով՝ գրում էր հողի վրա: Սակայն նրանք, այս լսելով, մեկը մյուսի հետևից՝ մեծից փոքր, ելան գնացին: Եվ մնացին միայն Հիսուսն ու մեջտեղում կանգնած կինը: Այդժամ Հիսուսը վեր նայեց և նրան ասաց. «Ո՛վ կին, քեզ ամբաստանողները որտե՞ղ են. քեզ ոչ ոք չդատապարտե՞ց»: Իսկ նա ասաց. «Ոչ ոք, Տե՛ր»: Հիսուսը նրան ասաց. «Ոչ էլ ես եմ քեզ դատապարտում. գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր:» Հովհաննես 8:1-11

Հիսուսը ի՞նչ է ուզում անել քո համար

«Նրա առաջ անտեսանելի արարած չկա, այլ ամեն բան հստակ է և ակնհայտ.» Եբրայեցիս 4:13ա

Մերժիր այն...կամ...կենտրոնացիր դրա վրա...կամ... ուսումնասիրիր և խոստովանիր

1- Նա ուզում է քո մեղքի զգացումը փոխարինել շնորհքով (ամեն օր)

«Մեղքը ձեզ վրա չպիտի իշխի, քանի որ օրենքի տակ չեք, այլ շնորհի:» Հռովմայեցիս 6:14

2- Նա ուզում է քո ամոթը փոխարինել փրկությունով (հավիտենականություն)

«Մեզ նախասահմանեց, որ Հիսուս Քրիստոսի միջոցով իրեն որդեգիր լինենք՝ ըստ իր կամքի հաճության:» Եփեսացիս 1:5

«Հապա որքա՛ն առավել հիմա, երբ նրա արյունով արդարացած ենք, նրա բարկությունից փրկված կլինենք: Որովհետև եթե այն ժամանակ, երբ թշնամի էինք Աստծուն, նրա հետ հաշտվեցինք իր Որդու մահով, ապա որքա՛ն առավել կփրկվենք նրա կյանքով, երբ հաշտվել ենք: Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև Աստծով ենք պարծենում մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, որով հիմա հաշտությունն ընդունեցինք:» Հռովմայեցիս 5:9-11

Ինչո՞վ կարող ես պատասխանել Հիսուսին

Հետևելով Հիսուսին

* Գցիր Քարերը
* Թող թողնելը

«Ինչ որ աչքը չտեսավ, ու ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, այն Աստված պատրաստեց իրեն սիրողների համար:» Ա Կորնթացիս 2:9բ

«Աստված այնքան սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա: Որովհետև Աստված իր Որդուն աշխարհ չուղարկեց՝ դատելու աշխարհը, այլ որպեսզի նրա միջոցով աշխարհը փրկվի:» Հովհաննես 3:16-17

«Ուրեմն հիմա ոչ մի դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսի մեջ եղողների համար:» Հռովմայեցիս 8:1

Աստված ուզում իրեն որպես Փրկիչը ընդունես

Հաջորդ Քարոզի Թեման:

ՀԻՍՈՒՍ ԵԿԱՎ ՈՐ ՄԵՆՔ ՏԵՄՆԵՆՔ

Հովիվ Սարօ Խաչիկեան